ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը **4**

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ **14**

Ֆինանսական համակարգի ցուցանիշներ **22**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն **28**

ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը **29**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչություն

ՀՀ և ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների և ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքը ըստ մարզերի (30.06.2010թ. դրությամբ) **30**

Տնտեսական հետազոտությունների վարչություն

Ռ. Մնացականյան, Ա.Մկրտչյան

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի և տնտեսական զարգացման վրա մարդկային կապիտալի և միգրացիայի ազդեցության գնահատումը **74**

ՀՀ ֆինանսական համակարգը 2010 թվականի երրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

30.09.2010 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 400 մասնաճյուղերով:

2010 թվականի երրորդ եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների աճ, իսկ վարկային շուկայում բանկային համակարգը գործել է առավել ակտիվ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն աճել է 4.4%-ով (13.0 մլրդ դրամով) և կազմել 306.6 մլրդ դրամ:

Երեք բանկ համալրել են կանոնադրական հիմնադրամ՝ ընդհանուր 8.6 մլրդ դրամի չափով: Եռամսյակի ընթացքում համակարգն ապահովել է 8.7 մլրդ դրամի չափով զուտ շահույթ:

Կապիտալի համեմատ ակտիվների ավելի արագ աճի պայմաններում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 21.6%:

Դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 26.9%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր պարտավորությունները աճել են 7.3%-ով (75.6 մլրդ դրամով) և կազմել՝ 1 տրլն 111.2 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 53.6 մլրդ դրամի և ավանդների 22.3 մլրդ դրամի աճերով: Ընդհանուր պարտավորությունների աճ արձանագրվել է 16 բանկում և նվազում՝ 5 բանկում:

Պարտավորությունների կազմում հիմնականում նվազել են իրավաբանական անձանց ժամկետային ավանդները՝ 11.5%-ով կամ 11.4 մլրդ դրամով:

30.09.2010 թվականի դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր ավանդների մեծությունը կազմում է 618.4 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն աճել են 6.5%-ով կամ 22.3 մլրդ դրամով: Իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները նվազել են 0.01%-ով կամ 38 մլն դրամով:

Դրամային ավանդները եռամսյակի ընթացքում աճել են 12.3%-ով կամ 19.5 մլրդ դրամով, իսկ արտարժութային ավանդները՝ 0.6%-ով կամ 2.8 մլրդ դրամով:

Եռամսյակի ընթացքում պարտավորությունների կազմում որոշակի նվազել են են իրավաբանական անձանց ժամկետային ավանդների և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռները, իսկ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռներն աճել են:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Դիտարկվող ժամանակաշրջանում առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները աճել են 6.7%-ով (88.6 մլրդ դրամով) և կազմել՝ 1 տրլն 417.8 մլրդ դրամ՝ մեծապես պայմանավորված տնտեսության վարկավորման աճով: Եռամսյակի ընթացքում 19 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 2 բանկում՝ նվազում:

Ակտիվների կազմում հիմնականում աճել են տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը)՝ 7.6%-ով (58.4 մլրդ դրամով), պետական արժեթղթերը՝ 14.1%-ով (15.9 մլրդ դրամով), բանկերում թղթակցային նոստրո հաշիվները 15.3%-ով (9.6 մլրդ դրամով):


Երրորդ եռամսյակի ընթացքում նվազել են ԿԲ-ում թղթակցային հաշիվները՝ 3.7%-ով (5.1 մլրդ դրամով) և բանկերի նկատմամբ պահանջները՝ 4.6%-ով (3.0 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը

30.06.2010



30.09.2010



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Իրավաբանական անձանց վարկերն աճել են 8.7%-ով (37.6 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց վարկերը՝ 1.3%-ով (4.0 մլրդ դրամով), բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 34.6%-ով (9.8 մլրդ դրամով), լիզինգն ու ֆակտորինգը՝ 50.7%-ով (7.0 մլրդ դրամով):


30.09.2010 թվականի դրությամբ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրած վարկերի ծավալը (առանց լիզինգի և ֆակտորինգի) կազմում է 810.4 մլրդ դրամ, որի 58.0%-ը բաժին է ընկնում իրավաբանական անձանց, 37.3%-ը՝ ֆիզիկական անձանց, 4.7%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) հաշվետու եռամսյակում աճել են 6.5%-ով (56.5 մլրդ դրամով) և կազմել՝ 921.8 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 4.1%-ով և կազմել 401.8 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 8.5%-ով և կազմել 519.9 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 1 տոկոսային կետով և կազմել 43.6%:


Ոչ ռեզիդենտներին տրամադրած վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 5.5%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրած վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 7.5%-ով և կազմել են համապատասխանաբար 61.0 մլրդ դրամ և 860.7 մլրդ դրամ:

Ռեզիդենտների վարկերում ամենամեծ աճն ապահովել են արդյունաբերության, ֆինանսական հատվածի և առևտրի ճյուղերի վարկերը (ապահովել են համապատասխանաբար 21.7 մլրդ դրամ, 10.0 մլրդ դրամ և 9.4 մլրդ դրամ աճեր): Ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում 1.2 տոկոսային կետով ավելացել է արդյունաբերության ճյուղի վարկերի տեսակարար կշիռը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը ավելացել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 96.0%-ը: 30.09.2010թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմում են ընդհանուրի 2.0%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.5%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%-ը:

Առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում աճել է 0.1 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 0.5 տոկոսային կետով, և կազմել են համապատասխանաբար 30.1% և 129.3%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2010թ. առաջին երեք եռամսյակի ընթացքում բանկային համակարգի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա ստացվող զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո) կազմել է 20.7 մլրդ դրամ[1], շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների՝ 2.0%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 9.5%: Շահույթով են աշխատել 19 բանկ, վնասով՝ 2 բանկ:

ՖՀՄՄ համաձայն բանկային համակարգի զուտ շահույթը 2010 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում կազմել է 23.5 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 2.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 10.8%:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 172.1 մլրդ դրամ համախառն եկամուտ, միաժամանակ իրականացնելով 146.0 մլրդ դրամ համախառն ծախսեր (վերահսկողական հաշվետվությունների հիման վրա): 2010թ. առաջին ինն ամիսների արդյունքներով բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմում է 26.1 մլրդ դրամ:

Առևտային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2010թ. առաջին ինն ամիսների ընթացքում



Տոկոսային եկամուտների գերակշիռ մասնաբաժինը՝ 80.9%-ը, ընկել է տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ են ունեցել ստացված միջնորդավճարներից եկամուտները և արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտները, որոնք կազմել են համապատասխանաբար 47.9% և 34.0%:

Ծախսերի կազմում տոկոսային ծախսերի զգալի տեսակարար կշիռը՝ 50.5%-ը, բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 42.8%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր զուտ մասհանումների մեծությունը (8.3 մլրդ դրամ) կազմել է ընդհանուր ակտիվների 0.6%-ը:

---

[1] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՄ համաձայն շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:

2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա են ստացել «Ջի Ընդ էյ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն, «Կիլիկիա» ՈՒՎԿ ՍՊԸ-ն և «Ֆ.Ի.Կ.Օ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն:


30.09.2010թ. դրությամբ ՀՀ տարածքում գործում են 32 վարկային կազմակերպություն՝ 60 մասնաճյուղերով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակի ընթացքում նվազել են 0.2%-ով (163 մլն դրամով) և կազմել 86.2 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 24, իսկ նվազում՝ 8 վարկային կազմակերպության մոտ:


2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրած վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալը նվազել է 1.3%-ով կամ 714 մլն դրամով և կազմել է 54.0 մլրդ դրամ: Դրամով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը նվազել է 0.5%-ով (141 մլն դրամով), արտարժույթով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը՝ նվազել է 2.4%-ով (573 մլն դրամով): Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը աճել են 0.1%-ով և կազմել՝ 35.0 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերը նվազել են 3.3%-ով և կազմել՝ 13.1 մլրդ դրամ: Լիզինգի ծավալը նվազել է 1.2%-ով՝ կազմելով 4.8 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրած վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալը աճել է 0.2%-ով (151 մլն դրամով)՝ կազմելով 76.3 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներում նվազել են գյուղատնտեսության և շինարարության ճյուղերին տրամադրված վարկերի տեսակարար կշիռները:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում «ստանդարտ» վարկերի և դեբիտորական պարտքերի

տեսակարար կշիռը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 95.9%: 30.09.2010թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.6%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6%-ը:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 6.7%-ով (2.0 մլրդ դրամով) և կազմել՝ 32.4 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը աճել է 904 մլն դրամով՝ պայմանավորված այս շուկա երեք նոր վարկային կազմակերպությունների մուտքով և ևս երեք կազմակերպությունների կողմից կանոնադրական հիմնադրամի համալրմամբ:

Վարկային կազմակերպությունների վերահսկողական հաշվետվությունների հիման վրա ստացվող առաջին երեք եռամսյակների կուտակված զուտ շահույթը կազմել է 2.6 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 24 վարկային կազմակերպություն, իսկ վնասով՝ 8 վարկային կազմակերպություն:

ՖՀՄՄ համաձայն վարկային կազմակերպությունների զուտ շահույթը 2010 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում կազմել է 3.3 մլրդ դրամ:

Ընդհանուր պարտավորությունները նվազել են 3.9%-ով (2.2 մլրդ դրամով) և տարեվերջի դրությամբ կազմել՝ 53.8 մլրդ դրամ: Հիմնականում նվազել են պարտավորությունները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ համապատասխանաբար 1.6 մլրդ դրամով և 851 մլն դրամով: Աճել են պարտավորությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ՝ համապատասխանաբար 154 մլն դրամով և 124 մլն դրամով:


Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կազմում 30.09.2010թ. դրությամբ բանկերի նկատմամբ պարտավորությունները կազմում է 17.0 մլրդ դրամ, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները 12.2 մլրդ դրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները՝ 15.2 մլրդ դրամ, ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 7.0 մլրդ, այլ պարտավորությունները՝ 2.3 մլրդ դրամ:

Տեղեկանք

2010 թվականի երրորդ եռամսյակի վերջին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքի վերաբերյալ

ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[1] արտաքին աշխարհի նկատմամբ 2010 թվականի երրորդ եռամսյակի վերջին կազմել են 494.2 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 446.1 մլն դոլարի փոխարեն: 2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 342.6 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 295.4 մլն դոլար հիմնական գումարի մարումներ[2]:

2003-2010 թվականներին ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը ունեցել է հետևյալ դինամիկան՝



2010 թվականի երրորդ եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են՝ Լյուքսեմբուրգը՝ 15.0 % (նախորդ եռամսյակ՝ 13.1%), Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 11.4 % (նախորդ եռամսյակ՝ 8.5 %), Ֆրանսիան՝ 10.8 % (նախորդ եռամսյակ՝ 11.9 %), Գերմանիան՝ 8.8 % (նախորդ եռամսյակ՝ 10.0 %), Նիդերլանդները՝ 8.6 % (նախորդ եռամսյակ՝ 7.2 %): Վարկերի մոտ 20 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

2010 թվականի երրորդ եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի վերջի համեմատ գրեթե չի փոխվել և կազմել է 5.5 %: Արտաքին վարկերի մոտ 62.0%-ը լողացող (LIBOR, ՊՊ) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը 4.7 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը աճել է և կազմել ներգրավված վարկերի 9.6 %-ը, նախորդ եռամսյակի վերջի 3.4 %-ի փոխարեն:

[1] Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:

[2] Նախորդ ժամանակահատվածի վերջի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրավված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ինչի հետևանքով դրանք դոլարային համարժեքի վերածելիս իրենց մեջ պարունակում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.09.2010 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների թիվը կազմում է 11:

Հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն աճել են 14.6%-ով՝ 30.09.2010 թվականի դրությամբ կազմելով 19.7 մլրդ դրամ, պարտավորություններն աճել են 23.6%-ով՝ կազմելով 7.1 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալն աճել է 10.1%-ով՝ կազմելով 12.6 մլրդ դրամ: Պարտավորությունների և կապիտալի նման աճը պայմանավորված է կապիտալի համալրման գործընթացով:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում ավանդները բանկերում (53.8% տեսակարար կշիռ), բանկային հաշիվները (11.6% տեսակարար կշիռ), ուղղակի ապահովագրության գծով ապահովադիրներից ստացվելիք գումարները (10.1% տեսակարար կշիռ) և արժեթղթերում ներդրումները (7.3% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում չվաստակած ապահովագրավճարների պահուստը (30.5% տեսակարար կշիռ), վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (20.3% տեսակարար կշիռ) և ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները ու ստացված վարկերը (15.6% տեսակարար կշիռ):

30.09.2010 թվականի դրությամբ շահույթով աշխատած ապահովագրական ընկերությունների թիվը կազմում է 5, իսկ վնասով՝ 5 ընկերություն: Հարկ է նշել, որ շահույթով աշխատած ընկերությունների շահույթը կազմում է 308.3 մլն դրամ, իսկ վնասով աշխատածների վնասը՝ 460.2 մլն դրամ:

ՖՀՄՄ համաձայն ապահովագրական ընկերությունները 2010 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ընդհանուր աշխատել են 127 մլն դրամ վնասով:

Հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմում է 6.6 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 3.1 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 46.7%-ը:

Դիտարկվող ժամանակաշրջանում հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմում է 1.3 մլրդ դրամ, իսկ վերաապա-հովագրողներից ստացվող գումարներն ապահովագրական հատուցումների գծով՝ 415 մլն դրամ:

30.09.2010 թվականի դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեն 59.1 հազար հատ գործող ապահովագրության պայմանագիր, որոնց գծով ապահովագրական գումարների մեծությունը կազմում է 3.33 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի՝ վերաապահովագրական գումարների մեծությունը կազմում է 2.7 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 82.2%-ը:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ


2010 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն: Ներդրումային ծառայություն մատուցող ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել և հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, հինգը՝ կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված

խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

30.09.2010թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 17.0 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 12%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 5%-ով՝ կազմելով 2.9 մլրդ դրամ:

2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունների ծավալը երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 52%-ով՝ կազմելով 81.3 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում նվազել է կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը՝ 23%-ով, և կազմել 1.0 մլրդ դրամ: Բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 41%-ով՝ կազմելով 3.0 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով առքուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 55%-ով՝ կազմելով 77.3 մլրդ դրամ: 2010թ. երրորդ եռամսյակի արդյունքներով ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ գերակշռել են պետական պարտատոմսերով գործառնությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 95.1%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 1.3% և 3.7%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2010 թ. իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առքուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերով իրականացված գործառնությունները՝ կազմելով պետական արժեթղթերով գործառնությունների 58%-ը: Պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 26% և 16%:

2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված առքուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 4%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 53%-ով և կազմել 5.0 մլրդ դրամ, ընդ որում, շրջանառության 29%-ը կազմել են ռեպո գործառնությունները, 10%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերի և 61%-ը՝ պետական պարտատոմսերի առքուվաճառքի գործառնությունները:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում իրականացված գործառնությունների մեջ 89%-ը կազմում են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի կողմից իրականացված գործառնությունները, 11%-ը՝ ներդրումային ընկերությունների կողմից իրականացված գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 12%-ով և կազմել 430.0 մլրդ դրամ, որից 227.9 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

30.09.2010թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 1.9 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ աճելով 2%-ով:

2010 թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1569 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 113641 մարդ:

30.09.2010 թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել թվով 17 թողարկողների 19 դասի արժեթղթեր,այդ թվում՝ 12 բաժնետոմս (11 թողարկողի) և 7 պարտատոմս (7 թողարկողի): Թողարկողներից 4-ը հանդիսանում են բանկ: Ընդ որում, բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 32.4 մլրդ դրամ, որից 30.1 մլրդ դրամ բաժնետոմսերը ձևավորվել են հրապարակային տեղաբաշխման արդյունքում, իսկ պարտատոմսերի ծավալը կազմել է 3.4 մլրդ դրամ: Թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով: Թողարկված պարտքային արժեթղթերի 16%-ը բաժին է ընկնում առևտրային բանկերին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում: Մասնավորապես, բանկային համակարգի կարգավորման դաշտում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում՝

ա) սահմանվել են օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի լիցենզավորման պայմաններ, որոնք են՝

- օտարերկրյա բանկի վարկանիշն առնվազն պետք է լինի ԱԱ-(Aa3),
- օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողությունը բավարարում է Բազելյան կոմիտեի կողմից մշակված «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներին»,
- օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկիրը համարվում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ չի հրապարակվել որևէ հայտարարություն,
- ՀՀ կենտրոնական բանկի և օտարերկրյա բանկի գրանցման երկրի վերահսկող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ,
- օտարերկրյա բանկի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ ՀՀ տարածքում օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից իր գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում դրանք օտարերկրյա բանկի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,
- օտարերկրյա բանկը չպետք է խախտած լինի տնտեսական նորմատիվների պահանջները լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում,
- օտարերկրյա բանկը ԿԲ-ում կամ որևէ առևտրային բանկում բացել է ավանդ առնվազն 200 միլիոն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի չափով, ընդ որում ավանդը ենթակա է հետ վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում:

Այս փոփոխությունները հնարավորություն կտան ապահովել առողջ և ֆինանսապես կայուն օտարերկրյա բանկերի մուտքը ՀՀ ֆինանսական համակարգ՝ միաժամանակ երկրում ապահովելով ֆինանսական համակարգի կայունությունն ու ավանդատուների շահերի պաշտպանվածությունը:

2. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում.

- սահմանվել է, որ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում վարկային ռեսուրսների շուկայում կնքված մեկ աշխատանքային օրանոց (օվերնայթ) վարկային պայմանագրերով տրամադրված միջոցները կանոնակարգի 2-ի իմաստով համարվում են բարձր իրացվելի ակտիվներ,

- հստակեցվել է, որ արտարժույթի տնօրինման նորմատիվը չի կիրառվում բանկերի համախմբված հաշվետվությունների նկատմամբ,
- սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում իրականացվող պարտադիր պահուստավորումը, որի նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 12 տոկոսի չափով, 6%-ով իրականացվում է ՀՀ դրամով և 6%-ով արտարժույթով, ընդ որում՝ արտարժույթով ներգրավված միջոցների դրամային պահուստավորումն իրականացվում է ըստ դրամով ներգրավված միջոցների պահուստավորման օրացույցի,
- սահմանվել է, որ 2010 թվականի օգոստոսի 1-ից առանց ածանցյալ գործիքների արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի և օտարերկրյա բանկերի հետ կնքված ածանցյալ գործիքները:

3. «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում կատարվել են փոփոխություններ, ըստ որի հաշվետվությունների ձևերը և լրացման կարգը համապատասխանեցվել են «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարված փոփոխություններին:

4. «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարների վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը»-ում փոփոխվել են երաշխավորված ավանդի չափերն՝ սահմանելով դրամային ավանդի դեպքում 4 միլիոն հայկական դրամի չափով, արտարժութային ավանդի դեպքում՝ 2 միլիոն հայկական դրամի չափով: Այս փոփոխությունը պայմանավորված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում կատարված փոփոխություններով:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով 2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում փոփոխություններ են կատարվել *«Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ում,* որոնց հիմնական նպատակը տեխնիկական պահուստներում ապահովագրության պայմանագրերից բխող պոտենցիալ պարտավորությունների առավել ճշգրիտ արտացոլումն է:

Կանոնակարգ 3/03-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Վերանայվել է տեխնիկական պահուստների հաշվապահական հաշվառման մոտեցումը, ինչի արդյունքում տեխնիկական պահուստները ապահովագրական ընկերության պարտավորություններում արտացոլվելու են համախառն մեծությամբ (առանց նվազեցնելու հուսալի վերաապահովագրողների մասնաբաժինը), իսկ վերաապահովագրողի մասնաբաժինը տեխնիկական պահուստներում արտացոլվելու է ապահովագրական ընկերության ակտիվներում:
- Բարձրացվել է ապահովագրական ընկերությունների պատասխանատու ակտուարների դերը տեխնիկական պահուստների հաշվարկման գործընթացում, մասնավորապես՝
  - հնարավորություն է տրվել ապահովագրական ընկերության պատասխանատու ակտուարներին ձևավորել նաև կանոնակարգով չնախատեսված լրացուցիչ պահուստներ կամ կանոնակարգով նախատեսված պահուստները հաշվարկել կանոնակարգով չնախատեսված մեթոդներով՝ Կենտրոնական բանկի համաձայնության առկայության դեպքում:
  - ազատականացվել է մաթեմատիկական պահուստի հաշվարկը, այսինքն՝ ստանդարտ բանաձևի փոխարեն սահմանվել են սկզբունքներ, որոնց ներքո ապահովագրական ընկերության պատասխանատու ակտուարները պետք է հաշվարկներ իրականացնեն:
  - նախատեսվել է, որ ոչ համամասնական վերաապահովագրության պայմանագրերի գծով վերաապահովագրողի մասնաբաժինը պահուստներում հաշվարկվում է ապահովագրողի պատասխանատու ակտուարի կողմից հաստատված ակտուարական մեթոդների համաձայն՝ Կենտրոնական բանկի համաձայնության առկայության դեպքում:
- Շտկվել են կանոնակարգի կիրառման ընթացքում ի հայտ եկած թերությունները և անճշտությունները:

2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի հուլիսի 6-ի 158-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ է կատարվել ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի 68Ն որոշման մեջ, որի նպատակն է հաշվետու թողարկող հանդիսացող բանկերի համար բացառել բանկային ոլորտը և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությունների կրկնակի կամ հակասական պահանջների առկայությունը:


Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2010 թ. երրորդ եռամսյակում

2010թ. երրորդ եռամսյակում ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 4810 մլրդ դրամ (քանակը՝ 1977716), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 3969 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 860929: 2010թ. երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 8%-ով (283 մլրդ դրամով), իսկ քանակը՝ ավելացել է 20%-ով (145743-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 30%-ով (927 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է՝ 50394-ով (6 %-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնությունների) կազմել է մոտ 62 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 13452: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 4.4 մլրդ դրամով (քանակը՝ ավելացել է 2277-ով): Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումների ծավալը կազմել է 146 մլրդ դրամ (ավելացել է 8%-ով):

2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումների տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր վճարումների ծավալի 29%-ը, քանակի 52%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 31%-ով (270 մլրդ դրամով), իսկ քանակը՝ ավելացել է 97610-ով (28%-ով): 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ այս վճարումների ծավալը նվազել է 10%-ով (134 մլրդ դրամով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2010թ. երրորդ եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 140 մլրդ դրամի 2889923 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 10.5 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 2.6 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 0.5 մլրդ

դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 2.1 մլրդ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 681432, որը 2010թ. երկրորդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 6.8%-ով (43430 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 7.5%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 35%-ով (2.7 մլրդ դրամով):

2010թ. երրորդ եռամսյակում առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 13%-ով և կազմել 177 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը նվազել է 23%-ով և կազմել 69 մլրդ դրամ: Արդյունքում ֆիզիկական անձանց ուղղված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 109 մլրդ դրամ, որը նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 6 մլրդ դրամով:


Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև առևտրային բանկերի հետ համագործակցության արդյունքում մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված միջոցները կազմել են 6.9 մլրդ դրամ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2010թ. երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 56%-ը, քանակի 95%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալը ավելացել է 6%-ով (118 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է՝ 21%-ով (142010-ով): Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 55%-ը (2009թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 45%-ով), իսկ քանակի՝ մոտ 99.6%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 2219-ով՝ կազմելով 12832, իսկ ծավալը ավելացել է 2 մլրդ դրամով՝ կազմելով 35 մլրդ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կատարված փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 146 մլրդ դրամ (ավելացել է 11 մլրդ դրամով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)




Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա, և կազմել է

2.7 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել 1.6 մլրդ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.006%-ը, ծավալի 0.017%-ը (51 փոխանցում՝ 1.9 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.002%-ը, ծավալի 0.014%-ը (17 փոխանցում՝ 1.6 մլրդ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական վճարումներում բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները



ՀԱՄԱԽՍՈՒՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների ծավալի 39.4%-ը, քանակի 4.5%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծավալը ավելացել է 11%-ով, իսկ քանակը՝ 1%):

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2009										
I եռ..	989806	530280	1333397	31860	59875	704	2383078	562844	6248937	4842
տեսակարար կշիռը վճարումներում (%)	41.54	94.21	55.95	5.66	2.51	0.13	100	100		
II եռ.	1260960	594690	1543120	31625	88900	924	2892981	627239	8021865	4499
տեսակարար կշիռը վճարումներում (%)	43.59	94.81	53.34	5.04	3.07	0.15	100	100		
III եռ.	2121563	679249	1410056	34893	154334	1044	3685953	715186	8675669	5429
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.56	94.98	38.25	4.88	4.19	0.15	100	100		
IV եռ.	1617979	789849	927797	41912	150323	891	2696098	832652	9242227	5689
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.012	94.86	34.41	5.03	5.58	0.11	100	100		
Ընդամենը	5990307	2594068	5214370	140290	453432	3563	11658110	2737921	32188698	20459
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.38	94.75	44.73	5.12	3.89	0.13	100	100		

2010										
I եռ.	1262858	640985	688950	33795	148297	1046	2100105	675826	9496297	4963
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.13	94.84	32.81	5.00	7.06	0.15	100	100		
II եռ.	1755508	774247	1179761	35556	106883	732	3042152	810535	12614414	6364
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.71	95.52	38.78	4.39	3.51	0.09	100	100		
III եռ.	2240052	821259	1565602	38665	163558	1005	3969211	860929	9374108	5942
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.44	95.39	39.44	4.49	4.12	0.12	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 604 փոխանցում՝ 24 մլրդ դրամ ծավալով (2009թ. երրորդ եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 2.4 մլրդ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը կազմել է 40 մլն դրամ, որը գրեթե պահպանվել է նույն մակարդակում: Համախառն թղթային վճարումների համակարգով փոխանցումները հիմնականում պայմանավորված է կնքված ռեպո գործառնություններով:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից հաշվետու ժամանակահատվածում պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 493 հանձնարարական՝ մոտ 55 մլրդ դրամ ծավալով, ինչը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 9.9 մլրդ դրամով (որտեղ արժեթղթերի տեղաբաշխման հետ կատարված վճարումները ավելացել են 0.1 մլրդ դրամով, իսկ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները ավելացել են մոտ 9.8 մլրդ դրամով): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց մասնակիցների կողմից կատարվել է 35 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 20 մլրդ դրամի փոխանցում: Ընդ որում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 850 մլն դրամի վճարում, որտեղ համապատասխանաբար մոտ 435 մլն դրամ կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 415 մլն դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման հետ կապված գործառնություններ չեն իրականացվել:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 109 մլրդ դրամի 512 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.5 մլրդ դրամով: Համակարգի միջոցով կատարված ազատ առաքման գործառնությունները անվանական արժեքով կազմել են 347 մլրդ դրամ, իսկ գրավադրման հետ կապված գործառնությունները՝ 1 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2010թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 24 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2010թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր

քանակը կազմել է 778: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 719 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS - տերմինալների ընդհանուր քանակը կազմել է 3195, որից 450-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 25:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող (սպասարկող) քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+	+		
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+	+		
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+	+	+	+	
Արցախբանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ	+	+	+	+	
Յունիբանկ	+	+	+		
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
Արմսվիսբանկ					
ՊրոԿրեդիտ բանկ			+		

2010թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 1.2%-ով (3617 քարտով) և կազմել 299352: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակը ընդհանուր առմամբ ավելացել է 11.6%-ով (39813 քարտով). VISA-ն ավելացել է 12%-ով (26721 քարտով) և կազմել 249508, իսկ MasterCard-ը՝ 13%-ով (11273 քարտով) և կազմել 96660: Միջազգային այլ քարտերի քանակը ավելացել է 5%-ով (1819 քարտով):

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 30%-ով (33 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 29%-ով (647420):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1289229 գործառնություն՝ 52 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է մոտ 18%-ով (8 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 21%-ով (220884-ով):

«ԱրՔա» քարտերի զարգացման դինամիկան



VISA քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 55 մլրդ դրամ (936445 գործառնություն), իսկ MasterCard-ով իրականացվել է 21 մլրդ դրամ ծավալով 429103 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 46%-ով (17 մլրդ դրամ ծավալով), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը՝ 35%-ով (5.5 մլրդ դրամ ծավալով):

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2010 թ. երրորդ եռամսյակի ընթացքում)


Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ԱրԹա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	109792	2465305	44549	1132889
այդ թվում՝ անկանխիկ	430	20542	25	10344
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	27930	338742	6559	121877
այդ թվում՝ անկանխիկ	7509	206634	2384	60513
Ինտերնետ միջավայրում	2648	85460	507	34463
Ընդամենը	140370	2889507	51615	1289229
այդ թվում՝ անկանխիկ	10587	312636	2916	105320

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 235146 գործառնություն՝ 12 մլրդ դրամ ծավալով, որը ավելացել է 1.7 մլրդ դրամով:

2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների միջին օրական ծավալը կազմել է 1561 մլն դրամ, իսկ քանակը՝ 32110: 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գործառնությունների միջին օրական քանակը ավելացել է 29%-ով (7194-ով), իսկ ծավալը՝ 30%-ով (361 մլն դրամով):

ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 60 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 5 հազ. դրամ, (քանակը՝ համապատասխանաբար կազմել է 1.3 և 0.1), որը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա:

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2006 - 2009 թթ., ինչպես նաև 2009 - 2010 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը անդամակցում են 17 միջազգային դրամական փոխանցումների համակարգերի:

Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	1	-	44.54
ANELIK	9	1	6.54
CONTACT	8	2	9.84
MIGOM	12	2	8.46
BISTRAYA POCHTA	12	1	3.08
MONEY GRAM	16	1	3.55
LIDER	8	1	2.13
INTEREXPRESS	3	1	2.25
ZOLOTAYA CORONA	4	1	15.36
BLIZKO	4	2	1.56
BTF-Sauz	1	-	0.49
FASTER	1	1	0.25
ALUR *	-	-	0.32
AVERS	2	-	0.12
XPRESS MONEY	1	-	0.03
INTEL EXPRESS	1	-	0.43
RIA MONEY TRANSFER	2	1	0.40
MONEY TUN	-	1	0.09
COINSTAR MONEY TRANSFER	3	1	0.21
STEFI	-	1	0.36
*-դադարեցվել է գործունեությունը 03.08.2010թ.ից	-	1	0.45

2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում այս համակարգերին մասնակից առևտրային բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 132 մլրդ դրամ (քանակը՝ 546495), որը 10 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Նշված համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 20 մլրդ դրամով: Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 242 հազ. դրամ. 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 11 հազ. դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են մոտ 45 մլրդ դրամ. նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ նվազել են 51%-ով (47 մլրդ դրամով), իսկ մեկ վճարման միջինը կազմել է 2.1 մլն դրամ, որը նվազել է 1.5 մլրդ դրամով: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման կազմել են 56 մլրդ դրամ. նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 29%-ով (23 մլրդ դրամով):

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված համախառն փոխանցումների ծավալը 2010թ. երրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 788 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 38505 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 20 մլն դրամ. նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 22%-ով:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործում են 10 վճարահաշվարկային կազմակերպություններ, որից 4-ը իրավունք ունի իրականացնելու միայն դրամական միջոցների փոխանցում, մյուս 5-ը՝ վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ դրամական (փողային) փոխանցումներ, ինչպես նաև «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը:

Դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով ապահովում են արտասահմանից ՀՀ ուղղված վճարումների իրականացումը: Այդ կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 1.3 մլրդ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 0.1 մլրդ դրամի փոխանցում: Հաշվետու ժամանակահատվածում դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ ար-

տասահման փոխանցումները՝ 0.1%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 0.9%: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 111 հազ. դրամ: Ընդ որում՝ դրամական փոխանցումների իրականացման համակարգերով մեկ վճարման միջին ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 21 հազ. դրամով:

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 5 կազմակերպություններ մատուցում են կանխիկ միջոցներով՝ վարձավճարների ընդունման ծառայություններ: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունները համագործակցում են մոտ 34 կազմակերպությունների հետ: Ընդհանուր առմամբ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվում է՝ կոմունալ վճարումների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետտուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարների ընդունում և այլն:

Վճարումների ընդունումը իրականացվում է վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղադրված ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված մասնաճյուղերի միջոցով: Միաժամանակ մի շարք առևտրային բանկերին մատուցվում են պրոցեսինգային ծառայություններ՝ առանձին վճարների հավաքագրման գործընթացում:

2010թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ նշված վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվում են 687 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 5.2 մլրդ դրամի (2083003 գործառնություններ) միջոցների հավաքագրում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նշված ծավալը ավելացել է 44%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 10%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գործում են վճարահաշվարկային կազմակերպությունների 22 մասնաճյուղեր, որտեղ նույնպես մատուցվում են դրամական միջոցների փոխանցման ծառայություններ: Վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի միջոցով կատարվել է 360138 հատ գործառնություն, 1.3 մլրդ դրամ ծավալով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/ քլիրինգային ծառայություններ են մատուցում 11 առևտրային բանկերի համար: Այդ առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում իրենց մասնաճյուղային ցանցի միջոցով, որտեղ կատարվել է մոտ 0.3 մլրդ դրամի չափով 71266 գործառնություն:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 115 մլրդ դրամ ծավալով քարտային գործառնությունների պրոցեսինգ (2009թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ ավելացել է 30%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 6.7 մլրդ դրամի գործառնություն, իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում նաև արտասահմանում) իրականացվել է 12 մլրդ դրամի գործառնություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

	12.31.09	03.31.10	06.30.10	09.30.10
Բանկերի քանակը	22	22	21	21
Բանկերի քանակն ըստ կազմակերպաիրավական ձևի	22	22	21	21
ԲԲԸ	3	3	3	3
ՓԲԸ	18	18	17	17
ՍՊԸ	1	1	1	1
Կոոպերատիվ	0	0	0	0
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	21	21	21	21
այդ թվում՝ 50%-ից ավել	13	14	14	14
այդ թվում՝ 95%-ից ավել	10	11	13	12
Բանկերի կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	71.4	74.5	78.9	78.6
Վարկային կազմակերպությունների քանակը	27	28	29	32
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	15	15	15	15
այդ թվում՝ 50%-ից ավել	10	10	10	10
այդ թվում՝ 95%-ից ավել	8	8	8	9
Վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	46.5	40.9	40.3	39.9
Ապահովագրական ընկերությունների քանակը	12	12	12	11
այդ թվում՝ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	0	0	0	0
այդ թվում՝ ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	12	12	12	11
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	9	9	9	8
այդ թվում՝ 50%-ից ավել	7	7	7	6
այդ թվում՝ 95%-ից ավել	5	5	5	4
Ապահովագրական բրոքերներ	5	5	5	5
Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություն մատուցող անձինք[1]	30	30	29	29
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող անձ/բանկ/	22	22	21	21
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություն	8	8	8	8
Հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների քանակը	19	17	17	17
Գրավատների քանակը	117	118	117	123
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	10	4	1	2
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	2	3	2	0
Փոխանակման կետերի քանակը[2]	250	252	243	253
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	4	1	1	1
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	0	4	1	0
Արժութային դիլերների քանակը	2	4	3	3
Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ	10	10	9	9

[1] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մասնագիտացված անձինք 2008թ. հունիսի 30-ի դրությամբ վերալիցենզավորվել են որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:

[2] Ներկայացված են գործող փոխանակման կետերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

	2009 թվականի III եռամսյակ	2009 թվականի IV եռամսյակ	2010 թվականի I եռամսյակ	2010 թվականի II եռամսյակ	2010 թվականի III եռամսյակ
Միջին եռամսյակային ակտիվներ[1]	1194990	1274020	1333813	1332528	1391971
Միջին եռամսյակային վարկեր	641740	684814	717750	746948	789388
Միջին եռամսյակային պարտավորություններ	940720	1006984	1054084	1043860	1091911
Միջին եռամսյակային ավանդներ	591253	614454	638589	611414	612280
Միջին եռամսյակային կապիտալ	254270	267036	279729	288667	300060
Միջին եռամսյակային ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշ	28.6%	28.5%	28.8%	28.8%	28.1%
Միջին եռամսյակային ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	34.5%	34.7%	33.4%	31.6%	29.8%
Միջին եռամսյակային ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	149.6%	143.9%	140.5%	134.6%	130.5%

[1] Միջին եռամսյակային ցուցանիշները հաշվարկվում են եռամսյակի երեք ամիսների մեծությունների միջինացմամբ:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ[1] ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

	31/12/2009	31/01/2010	31/03/2010	30/06/2010	30/09/2010	Փոփոխություն 30/09/10 - 30/06/10
Հիմնական կապիտալ	261419	259680	269891	278430	291355	12925
Կանոնադրական հիմնադրամ	188641	188641	192792	195212	203799	8587
Շահույթ / վնաս[2], *այդ թվում՝*	64570	62809	68868	68449	72477	4028
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	8577	-1781	4235	11989	20666	8678
Տոկոսային եկամուտներ	114724	10227	31383	64395	98989	34594
Տոկոսային ծախսեր	52925	4878	14089	28407	42945	14538
Ոչ տոկոսային եկամուտներ	31746	1800	8357	17200	27655	10455
Ոչ տոկոսային ծախսեր	59602	5006	15651	32347	49301	16954
Այլ ծախսեր[5]	25396	3925	5765	8847	13723	4877
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**1047592**	**1025141**	**1098179**	**1035545**	**1111185**	**75639**
Բանկերի թղթակցային հաշիվներ	6531	8001	10472	9821	7632	-2189
Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	211233	190343	192907	190907	223949	33042
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	87384	85847	95924	97932	118465	20533
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	252480	253693	274894	241966	260918	18952
Ժամկետային ավանդներ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	374313	366139	387103	354138	357443	3305
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**1325807**	**1300207**	**1383592**	**1329239**	**1417835**	**88596**
Կանխիկ դրամական միջոցներ	64673	64444	66568	64161	68727	4565
Թղթակցային հաշիվներ բանկերում (ներառյալ ԿԲ)	274858	265679	291058	198963	203462	4499
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	67603	64362	54557	66866	67657	790
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16598	15176	15540	15689	17855	2166
Պետական արժեթղթեր, այդ թվում	109342	108394	106748	112438	128331	15894
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր						0
Այլ արժեթղթեր	4180	5581	6267	5128	6038	909
Վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց	703366	694685	747459	758924	810409	51485
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**756287**	**733654**	**784999**	**794821**	**837216**	**42396**
1. Ստանդարտ	719963	682356	741064	756325	799366	43041
2. Հսկվող	14875	29651	23168	18337	18902	565
3. Ոչ ստանդարտ	10104	15805	16047	13753	13755	2
4. Կասկածելի	11345	5842	4721	6405	5193	-1212

[1] Հաշվարկներում ընդգրկված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերը:

[2] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[3] Տվյալներում ներառված չեն ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունները:

[4] Տվյալները ներկայացնում են բանկերի հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները: Նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

[5] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

	31/12/2009	31/03/2010	30/06/2010	30/09/2010	Փոփոխություն 30/09/10 - 30/06/10
Հիմնական կապիտալ	26159.4	29177.1	30298.0	32320.8	2022.8
Կանոնադրական հիմնադրամ	19799.7	22799.7	22799.6	23883.4	1083.7
Շահույթ / վնաս[1], *այդ թվում՝*	5903.9	5918.6	6820.1	7891.8	1071.7
Հաշվետվու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	2589.9	72.0	1395.8	2610.0	1214.2
Տոկոսային եկամուտներ	10546.9	2724.7	5754.3	8752.3	2998.0
Տոկոսային ծախսեր	3291.7	902.0	1906.0	2888.6	982.6
Ոչ տոկոսային եկամուտներ	3768.3	955.4	1633.6	2581.5	947.9
Ոչ տոկոսային ծախսեր	4976.2	1256.8	2657.9	4022.6	1364.7
Զուտ մասհանումներ	2784.6	1340.1	1165.2	1397.4	232.2
Այլ ծախսեր[2]	672.7	109.1	255.1	415.2	160.1
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	49573.4	55567.5	55965.3	53778.5	-2186.8
Բանկերից ներգրաված միջոցներ	20357.4	21792.1	18584.8	16964.0	-1620.8
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	11535.3	13101.5	13105.2	12254.2	-851.0
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	147.4	175.8	219.6	213.8	-5.8
Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	11395.1	13159.9	14691.9	14976.3	284.4
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	75822.8	84841.6	86347.1	86183.7	-163.4
Կանխիկ դրամական միջոցներ	663.7	600.2	185.3	180.9	-4.4
Բանկային հաշիվներ	3146.9	7169.6	4395.9	5097.9	702.0
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	15650.3	17927.7	20733.9	21197.7	463.8
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	542.9	839.1	1143.2	1292.1	148.9
Վարկեր	45011.1	47967.7	49831.2	49174.2	-657.0
Ֆինանսական վարձակալություն	5285.2	4882.7	4879.6	4822.6	-57.1
Պետական արժեթղթեր	2131.2	2613.5	2305.5	1041.1	-1264.4
Այլ արժեթղթեր	3.7	3.7	3.7	3.7	0.0
Վարկային ներդրումներ, *այդ թվում*	59830.2	65517.0	70443.4	71277.3	833.9
Ստանդարտ	57292.0	62540.2	68005.6	68675.5	669.9
Հսկվող	1468.7	1882.1	1591.7	1752.0	160.3
Ոչ ստանդարտ	575.8	622.8	426.4	554.2	127.8
Կասկածելի	493.6	471.9	419.7	295.5	-124.3

[1] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:
[2] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:
[3] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր պարտավորությունները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև այլ պարտավորությունները, ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները և հաշվարկված վճարվելիք տոկոսները:
[4] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները, սակայն նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:
[5] Ն1[1] նորմատիվի հաշվարկում ընդգրկված են միայն այն վարկային կազմակերպությունների տվյալները, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավում են փոխառություններ:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

	31.12.09	31.03.10	30.06.10	30.09.10	Փոփոխություն 30/09/10 - 30/06/10
Դրամական միջոցներ	239	19	34	32	-2
Բանկային հաշիվներ	1775	1164	1358	2276	918
Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	1761	1655	2254	2141	-113
Հատուցումների գծով պահանջներ	165	114	86	165	79
Ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ	8957	10271	9886	9995	109
Ոչ ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ	1635	861	548	837	289
Տրամադրված փոխառություններ	132	455	574	1531	957
Արժեթղթեր	1243	1236	1235	1446	211
Դեբիտորական պարտքեր	565	389	613	714	101
Հիմնական միջոցներ	624	711	713	763	50
Հնարավոր կորուստների անհավաքագրելիության պահուստներ	-311	-250	-228	-315	-87
Այլ ակտիվներ	179	185	168	115	-53
Ընդամենը ակտիվներ	**16964**	**16809**	**17239**	**19702**	**2463**
Դրամ	6937	6639	7702	9213	1511
Արտարժույթ	10027	10170	9537	10489	952
Վճարվելիք գումարներ ապահովագրական հատուցումների գծով	20	18	43	108	65
Համաապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք գումարներ	1579	896	1735	1435	-300
Ընթացիկ փոխառություններ և վարկեր	0	0	70	1107	1037
Ապահովագրական պահուստներ	2719	2837	2865	2917	52
ՉԱՊ	2051	2207	2214	2163	-51
Պահանջների պահուստ	536	481	483	559	76
Մաթեմատիկական պահուստ	0	0	0	0	0
Այլ պահուստներ	132	149	168	195	27
Կրեդիտ. պարտքեր բյուջեի և պարտադիր սոց. ապահովագրության վճարումների գծով	105	91	94	91	-3
Ոչ ընթացիկ փոխառություններ և վարկեր	0	0	0	0	0
Այլ պարտավորություններ	255	738	944	1428	484
Ընդամենը պարտավորություններ	**4678**	**4580**	**5751**	**7086**	**1335**
Դրամ	3325	3913	4468	5134	666
Արտարժույթ	1353	667	1283	1952	669
Կանոնադրական կապիտալ	10938	10654	9654	10985	1331
Ընթացիկ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	776	363	11	-152	-163
Նախորդ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	336	868	1385	1386	1
Այլ	235	345	438	397	-41
Ընդամենը սեփական կապիտալ	**12286**	**12229**	**11488**	**12616**	**1128**
Այլ ցուցանիշներ					
Ապահովագրական գումարներ	3386642	3344961	2968127	3250344	282217
Ապահովագրավճարների համախառն մեծությունը	8103	1898	4786	6582	1796
Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	4036	582	2427	3074	647
Ապահովագրական հատուցումների համախառն մեծությունը	1901	355	782	1324	542
Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում	891	114	223	415	192

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

	31.12.09	31.03.10	30.06.10	30.09.10	Փոփոխություն 30.09.10-30.06.10
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	***2936.3***	***2921.0***	***2787.5***	***2929.4***	***141.9***
Չբաշխված շահույթ (վնաս), այդ թվում՝	317.6	381.4	223.4	328.0	104.6
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	210.6	98.3	29.7	205.5	175.9
Միջնորդավճարներ և եկամուտներ ՆՕ մատուցումից	50.8	5.5	12.1	16.7	4.6
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	2416.5	234.4	914.8	1234.8	320.1
Կանոնադրական կապիտալ	1755.8	2280.6	2318.2	2351.9	33.6
Ընդհանուր պարտավորություններ	***12636.6***	***10977.1***	***12365.9***	***14021.1***	***1655.2***
Ռեզիդենտ բանկերից ներգրաված վարկեր	1541.1	802.0	620.7	325.2	-295.5
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	10402.8	9581.7	11246.0	13197.2	1951.2
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ	***15572.9***	***13898.1***	***15153.4***	***16950.5***	***1797.1***
Կանխիկ դրամական միջոցներ	166.1	177.9	184.2	189.3	5.1
Բանկային հաշիվներ	581.5	270.6	406.1	274.0	-132.1
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	10534.1	9858.6	11488.8	13404.0	1915.2
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պետական արժեթղթեր	1116.6	1232.1	859.5	766.4	-93.1
Այլ արժեթղթեր	1363.5	747.3	896.2	795.5	-100.8

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՋԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

	2010		
	I եռ.	II եռ.	III եռ.
ՆԲ կողմից կնքված գործարքներ	**326718.0**	**328568.5**	**229798.0**
բաժնային արժեթղթեր	1741.0	2021.0	2946.3
այդ թվում՝ բորսայական	0.0	10.3	7.7
կորպորատիվ պարտատոմսեր	460.2	526.8	82.5
այդ թվում՝ բորսայական	329.4	525.3	77.3
պետական պարտատոմսեր	42546.8	44406.5	69378.9
այդ թվում՝ բորսայական	1927.4	1413.9	5202.1
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	281970.0	281614.2	157390
այդ թվում՝ բորսայական	1372.4	822.8	658
ՆԸ կողմից կնքված գործարքներ	**41637.3**	**44730.2**	**53622.8**
բաժնային արժեթղթեր	44.7	82.5	27.6
այդ թվում՝ բորսայական	2.5	11.9	14.6
կորպորատիվ պարտատոմսեր	1170.1	799.9	944.5
այդ թվում՝ բորսայական	1149.9	780.6	936.6
պետական պարտատոմսեր	4474.0	5577.8	7897.9
այդ թվում՝ բորսայական	324.8	30.7	453.2
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	35948.4	38270.1	44752.8
այդ թվում՝ բորսայական	1131.9	920.8	775.8

[1] Ռեպո/հակադարձ ռեպո գործարքները չեն ներառում երկարաձգումները:

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(2010 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	30.09.10	*30.06.10*	*31.12.09*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Դրամական միջոցներ	7,477,379	7,602,425	7,776,292
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	165,326,037	192,198,631	221,678,070
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	387,681,810	351,282,886	459,234,675
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	917	917	917
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	94,137,099	90,857,716	25,171,087
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	67,358,299	65,970,143	101,621,324
Այլ ակտիվներ	1,302,666	373,901	666,956
	723,284,207	**708,286,619**	**816,149,321**
Ակտիվներ տեղական արժույթով			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	65,472,599	57,874,698	70,735,139
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	93,156,232	92,858,360	121,204,193
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	4,063,375	3,994,668	3,862,867
Հիմնական միջոցներ	20,656,654	18,137,276	15,762,787
Ոչ նյութական ակտիվներ	576,952	533,205	427,907
Այլ ակտիվներ	4,273,057	2,648,761	2,451,325
	188,198,869	**176,046,968**	**214,444,218**
Ընդամենը ակտիվներ	**911,483,076**	**884,333,587**	**1,030,593,539**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	82,594,710	101,044,686	150,616,174
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	1,147,628	1,301,698	1,329,188
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	86,682,203	83,644,096	95,263,527
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	871,182	863,008	36,588
Այ փոխառություններ	27,959,031	25,120,379	28,309,397
Այլ պարտավորություններ	145,047	168,906	206,504
	199,399,801	**212,142,773**	**275,761,378**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	303,975,630	295,550,662	320,669,631
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	67,773,133	50,909,764	53,204,221
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	168,492,092	163,024,510	177,194,796
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	186,857,210	180,618,785	172,556,583
Այլ պարտավորություններ	983,321	1,022,749	853,302
	728,081,386	**691,126,470**	**724,478,533**
Ընդամենը պարտավորություններ	**927,481,187**	**903,269,243**	**1,000,239,911**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	17,389,049	11,392,622
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	85,663,194	85,663,194	85,663,194
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	(2,503,838)	(2,109,084)	(1,414,100)
Կուտակված վնաս	(116,646,516)	(119,978,815)	(65,388,088)
Ընդամենը սեփական կապիտալ	**(15,998,111)**	**(18,935,656)**	**30,353,628**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**911,483,076**	**884,333,587**	**1,030,593,539**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2010 թվականի նոյեմբերի 23-ին և ստորագրվել:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության
միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2010 թ. 3-րդ եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբը	**ՀՓԻ**		**ԱՄՆ դոլար**
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,786,924,293.66
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,786,923,712.83
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	29,381,473.0		43,452,147.36
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Զուտ արտաքին ակտիվներ			1,135,972,668.57
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,135,972,087.73

Եռամսյակի վերջ			
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,852,649,949.10
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,852,649,370.00
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	27,797,884.00		43,258,725.54
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Զուտ արտաքին ակտիվներ			1,160,985,782.14
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,160,985,203.03

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2010 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ[1] տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցները:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.09.00 - 30.06.10թթ. ժամանակահատվածում ներկայիս գործող բանկերի՝ ՀՀ և ԼՂՀ տարածքներում տեղաբաշխած ընդհանուր վարկերն ավելացել են 1080%-ով, իսկ եթե ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները համեմատվում են 30.09.2000թ. գործող բոլոր բանկերի ընդհանուր վարկային ներդրումների հետ, ապա աճը կազմում է 717% (*տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1*):

30.06.09 - 30.06.10թթ. ժամանակահատվածում (այսուհետ հաշվետու տարում) բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալն ավելացել է 25%-ով և կազմել 792.0 մլրդ դրամ:


Աղյուսակ 1 . Բանկերի տրամադրած վարկերի ծավալները

	30.09.00 *(մլն դրամ)*	**31.12.01** *(մլն դրամ)*	**30.06.03** *(մլն դրամ)*	**30.06.04** *(մլն դրամ)*	**30.06.05** *(մլն դրամ)*	**30.06.06** *(մլն դրամ)*	**30.06.07** *(մլն դրամ)*	**30.06.08** *(մլն դրամ)*	**30.06.09** *(մլն դրամ)*	**30.06.10** *(մլն դրամ)*	**30.09.00-30.06.10** *(%)*	**30.06.09-30.06.10** *(%)*
Բոլոր բանկերը	96933	87004	91163	124386	159043	225327	307123	556483	632074	792046	717	25
30.06.10թ. դրությամբ գործող բանկերը	67144	74703	90146	124386	159043	225327	307123	556483	632074	792046	1080	25

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*


[1] *ԼՂՀ-ին վերաբերող տվյալները տարանջատված չեն ՀՀ մարզային տվյալներից, և ԼՂՀ ու ՀՀ տարածքների տվյալները դիտարկված են համընդհանուր համատեքստում:*

Գծապատկեր 1



30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում բոլոր մարզերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: (*տե՛ս գծապատկեր 2*):

Գծապատկեր 2




** Պատկերի հստակության նպատակով Երևանի ցուցանիշները չեն ներառվել, Երևանում վարկային ներդրումների ծավալը 30.06.2010թ. դրությամբ կազմել է 542 մլրդ դրամ:*

Երևանում վարկային ներդրումներն աճել են 26.2%-ով (112.5 մլրդ դրամով), իսկ ՀՀ մնացյալ մարզերում և ԼՂՀ-ում ընդհանուր վարկային ներդրումներն աճել են 18.8%-ով (47.4 մլրդ դրամով), ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 68.4% (*տե՛ս գծապատկեր 3, հավելված 1.2*):


30.06.09-30.06.10թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումների աճի տեմպը (25.3% աճ) զիջել է վարկային ներդրումների աճ ապահոված մարզերից Արմավիրի մարզը (15.1% աճ), Արագածոտնի մարզը (6.2% աճ), Լոռու մարզը (10.5% աճ) և Արարատի մարզը (24.1% աճ), իսկ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում գրանցվել է վարկային ներդրումների անկում համապատասխանաբար 21.7%-ով և 19.7%-ով (*տե՛ս հավելված 1.7*):

Գծապատկեր 3



2000-2010թթ. ժամանակաշրջանում վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 70%-ի շրջանակներում: 31.12.01թ. դրությամբ միայն Երևանում վարկային ներդրումների մասնաբաժինը զգալի նվազել է՝ պայմանավորված այդ ժամանկաշրջանում Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 4.8 մլրդ դրամ աճով (որն հետագայում դարձյալ նվազել է) և Երևանում էներգետիկայի վարկավորման ծավալների 5.5 մլրդ դրամ նվազմամբ (*տե՛ս գծապատկեր 4*):

Գծապատկեր 4



Հաշվետու տարվա ընթացքում ակտիվների (վարկային ռիսկ պարունակող) քանակը աճել է 11%-ով և կազմել 515.6 հազար: Նշված ժամանակահատվածում Երևանին բաժին է ընկնում ակտիվների քանակի՝ 35.9%-ը (30.06.09թ. Երևանին բաժին է ընկել ակտիվների քանակի 35.0%-ը):

Հաշվետու տարում Երևանում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի և կապի, արդյունաբերության (հիմնականում մետալուրգիայի, հանքագործության (Երևանում հանքագոր-

ծության ոլորտի վարկավորման աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարզերում բանկերը այս ոլորտի վարկավորումն իրականացրել են Երևանում գտնվող գլխամասի միջոցով), շինանյութերի, թանկարժեք իրերի և սննդի), ֆինանսական հատվածի, շինարարության և առևտրի վարկավորման աճերով: ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության, արդյունաբերության (հիմնականում մետալուրգիայի, շինանյութերի և թանկարժեք իրերի) և առևտրի վարկավորման աճերով: Արդյունաբերության ճյուղի վարկավորման համեմատաբար խոշոր աճեր են արձանագրվել Տավուշի (էներգետիկայի վարկավորման աճ), Վայոց Ձորի (տրանսպորտի և կապի ոլորտի վարկավորման աճ) մարզերում և ԼՂՀ-ում (տրանսպորտի և կապի ոլորտի վարկավորման աճ):

30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում տնտեսության բոլոր ճյուղերում (արդյունաբերության ճյուղերը դիտարկվում են համընդհանուր մեկ ճյուղ) արձանագրվել են վարկային ներդրումների ծավալների աճ *(տե՛ս հավելվածներ 1.5 և 1.6)*: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի ճյուղերի, սպառողական և հիփոթեքային վարկերի աճ:

Հաշվետու տարվա (30.06.09-30.06.10թթ.) ընթացքում.

- արդյունաբերության վարկերը աճել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի
- գյուղատնտեսության վարկերը նվազել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Երևանի, Կոտայքի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերի և ԼՂՀ-ի
- շինարարության վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում
- տրանսպորտի և կապի վարկերը նվազել են միայն Արարատի, Արագածոտնի, Տավուշի և Սյունիքի մարզերում
- առևտրի վարկերը աճել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Վայոց Ձորի մարզի
- սպառողական վարկերն աճել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Երևանի և Սյունիքի մարզերի
- հիփոթեքային վարկերն աճել են Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու, Արարատի մարզերում և ԼՂՀ-ում:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության, հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումներում զգալի ավելացել է արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը և նվազել է սպառողական վարկերինը *(տե՛ս աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2 . Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%

Ճյուղեր	**30.09.00**	**31.12.01**	**30.06.03**	**30.06.04**	**30.06.05**	**30.06.06**	**30.06.07**	**30.06.08**	**30.06.09**	**30.06.10**
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20	16	12	15	19
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6	6	5	7	6
Շինարարություն	2	3	4	4	4	4	5	6	7	8
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2	1	2	2	3
Առևտուր	11	17	20	21	22	22	20	20	21	21
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6	5	5	4	4
Սպառողական վարկեր	18	14	21	27	27	26	29	29	22	18
Հիփոթեքային					4	8	11	13	13	11
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6	7	8	9	10

Ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի. Երևանին բաժին է ընկնում ընդհանուր վարկերի 8%-ը) *(տե՛ս հավելված 1.2)*: Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերը մարզերի միջև համեմատաբար հավասարաչափ են բաշխված. ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի մարզը (23%),Արարատի մարզը (18%) և Կոտայքի մարզը (14%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Վայոց Ձորի մարզը (2.4%) և Տավուշի մարզը (2.1%):

Երևանում գյուղատնտեսության վարկերից հետո ցածր կենտրոնացվածություն ունեն սպառողական և արդյունաբերության վարկերը՝ համապատասխանաբար 56% և 67% մասնաբաժիններով:

Հաշվետու տարում Երևանի վարկավորման տեսակարար կշիռը փոքր-ինչ նվազել է սպառողական և հիփոթեքային վարկերում:

Վարկային ներդրումների ժամկետայնության առումով հաշվետու տարում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 78%: 30.06.10թ. դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալները գերազանցում է կարճաժամկետ վարկերի ծավալները (*տե՛ս հավելված 1.3*):

Հարկ է նշել, որ 30.09.00թ. դրությամբ ընդհանուր վարկային ներդրումներում մինչև 1 տարի ժամկետայնությամբ վարկերը կազմել են 53%, 31.12.01թ. դրությամբ՝ 41 %, 30.06.03թ. դրությամբ՝ 50%, 30.06.04թ. դրությամբ՝ 53%, 30.06.05թ. դրությամբ՝ 52%, 30.06.06թ. դրությամբ՝ 35%, 30.06.07թ. դրությամբ՝ 32% և 30.06.08թ. դրությամբ՝ 26%:

Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 3 տոկոսային կետով և 30.06.10թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 54%-ը (*տե՛ս հավելված 1.4*): 30.06.10թ. դրությամբ արտարժութային վարկերի ծավալները գերազանցում են դրամային վարկերի ծավալները Երևանում և Արարատի մարզում: Վարկային ներդրումների համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևան քաղաքում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզերում ըստ արժույթի տեսակի վարկային ներդրումների կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արժութային վարկերի տեսակարար կշիռները՝ ըստ ժամանակահատվածների

%

Վարկեր	Երևան	ԼՂՀ	Կոտայքի մարզ	Ընդամենը
Արտարժույթով 30.09.00թ.	88	46	85	84
Արտարժույթով 31.12.01թ.	82	83	75	82
Արտարժույթով 30.06.03թ.	65	92	90	71
Արտարժույթով 30.06.04թ.	65	67	72	68
Արտարժույթով 30.06.05թ.	67	55	74	67
Արտարժույթով 30.06.06թ.	59	39	64	59
Արտարժույթով 30.06.07թ.	47	20	41	41
Արտարժույթով 30.06.08թ.	40	21	32	37
Արտարժույթով 30.06.09թ.	52	50	55	51
Արտարժույթով 30.06.10թ.	59	44	50	54

Հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[2] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 2 տոկոսային կետով և 30.06.10 թ. դրությամբ կազմել 32% (*տե՛ս հավելված 1.1*): Փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերում Երևանի մասնաբաժինը ավելացել է 2 տոկոսային կետով՝ կազմելով 66% (*տե՛ս հավելված 1.2*): Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալներն աճել են 35%-ով, իսկ 30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) 1094%-ով (*տե՛ս հավելվածներ 1.5 և 1.7*):

Միջազգային ծրագրերով[3] տրամադրված վարկերը հաշվետու տարում աճել են 75%-ով, ընդ որում բոլոր մարզերում միջազգային ծրագրերով տրամադրված վարկերը աճել են, բացառությամբ Սյունիքի մարզի: Վերջինիս միջազգային ծրագրերով տրամադրված վարկերը նվազել են 0.7%-ով: Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռները հաշվետու տարում ավելացել են (30.06.10թ.՝ ըստ մարզերի տատանվում է 4%-47%՝ ի համեմատություն 30.06.09թ.՝ 15%-35%): Վերջինիս տեսակարար կշիռը բավականին բարձր է՝ վկայելով ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորությունը (*տե՛ս հավելված 1.1*):

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերում 11 տոկոսային կետով աճել է Երևանի մասնաբաժինը. 30.06.10թ. դրությամբ այդ վարկերի 54%-ը հատկացված է Երևանին (30.06.09թ.՝ 43%) (*տե՛ս գծապատկեր 5*):


---

[2] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 100 աշխատող:

[3] Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերին է վերաբերում միջազգային ծրագրերի (օր. Գերմանա-հայկական հիմնադրամի ծրագրեր, Համաշխարհային Բանկի Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր և այլն) միջոցով բանկերի միջնորդությամբ տրամադրված վարկերը:

Գծապատկեր 5

Միջազգային ծրագրերով տրամադրած վարկերի կառուցվածքն ըստ մարզերի




1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ, 6.Շիրակի մարզ, 7. Լոռու մարզ, 8.Գեղարքունիքի մարզ, 9.Տավուշի մարզ, 10.Վայոց ձորի մարզ, 11. Սյունիքի մարզ, 12. ԼՂՀ

Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2.9 տոկոսային կետով՝ 30.06.10թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկերի 1.1%-ը (*տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 6*):

Գծապատկեր 6

Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր վարկերում



Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում համեմատաբար բարձր է Գեղարքունիքի և Լոռու մարզերում (*տե՛ս Գծապատկեր 6*):

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.10թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 29 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի 7.6%-ը (30.06.09թ.՝ 8.5%-ը):

30.06.09-30.06.10թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 12%-ով (6.5 մլրդ դրամով)՝ ի հաշիվ գյուղատնտեսության, առևտրի և ֆինանսական հատվածի ճյուղերում վարկերի աճի:

Դիտարկվող ժամանակաշրջաններում վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 4. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	Վարկերի ծավալ (մլն ՀՀ դրամ)								Տեսակարար կշիռ (%)							
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.08	30.06.10
Արդյունաբերություն	718	497	1371	2203	3544	4817	7054	8609	23	36	29	26	13	9	13	14
այդ թվում՝ սննդի	591	313	742	1152	1196	1494	1584	1544	14	30	16	14	4	3	3	3
Գյուղատնտեսություն	269	312	537	1046	2481	6676	4790	12529	14	14	11	12	9	13	9	21
Առևտուր	54	111	270	1235	6969	9151	7561	10283	5	3	6	15	24	17	14	17
Շինարարություն	121	89	112	193	1253	5482	9148	1559	4	6	2	2	4	11	17	3
Սպառողական (ներառյալ հիփոթեք)	492	864	1584	2396	8455	13368	12953	9602	40	25	34	28	30	25	24	16
Այլ ճյուղեր	324	315	832	1434	5822	13316	10707	16209	14	16	18	17	20	25	20	26
Ընդամենը	1977	2185	4706	8508	28525	52811	53798	60335	100	100	100	100	100	100	100	100

Հաշվետու տարում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի աճ է արձանագրվել գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Երևանի, Լոռու,Տավուշի և Վայոց Ձորի մարզերի (տե՛ս աղյուսակ 5): Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ընդհանուր վարկերում 12.2 տոկոսային կետով նվազել է ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող Երևանի մասնաբաժինը՝ կազմելով 55.9%:

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի (հազար ՀՀ դրամ)

	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03												
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	
30.06.04												
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	
30.06.05												
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	
30.06.06												
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4
30.06.07												
վարկերի ծավալները	18824712	1033694	941069	1499227	534782	1062152	1300085	573330	512376	210739	434469	598130
տեսակարար կշիռները (%)	66.0	3.6	3.3	5.3	1.9	3.7	4.6	2.0	1.8	0.7	5.0	2.1
30.06.08												
վարկերի ծավալները	34953514	1877424	2126097	2842366	1097859	1720411	2223500	1038964	1136956	362216	2171493	1260057
տեսակարար կշիռները (%)	66.2	3.6	4.0	5.4	2.1	3.3	4.2	2.0	2.2	0.7	4.1	2.4
30.06.09												
վարկերի ծավալները	36619084	1499920	1948526	2469149	771746	1682260	2394086	691453	1879617	1308447	1761307	772197
տեսակարար կշիռները (%)	68.1	2.8	3.6	4.6	1.4	3.1	4.5	1.3	3.5	2.4	3.3	1.4
30.06.10												
վարկերի ծավալները	33718369	4475028	2224890	4897139	1561345	2045382	2085920	1664782	1168453	544999	2448781	3499700
տեսակարար կշիռները (%)	55.9	7.4	3.7	8.1	2.6	3.4	3.5	2.8	1.9	0.9	4.1	5.8


2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[4]

30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցները ավելացել են 501%-ով և կազմել 614.2 մլրդ դրամ, ընդ որում ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 698%-ով, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 355%-ով և կազմել են համապատասխանաբար 346.3 մլրդ դրամ և 268.0 մլրդ դրամ (*տե՛ս հավելված 1.5*):

Ներկայիս գործող բանկերի կողմից ներգրավված միջոցները նշված ժամանակահատվածում աճել են 789%-ով ընդ որում ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 961%-ով, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 636%-ով (*տե՛ս հավելված 1.6*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 4 տոկոսային կետով և կազմել 80% (ընդ որում 2000-2009թթ. Երևանում ավանդների կենտրոնացվածությունը տատանվում է 82-85%-ի շրջանակներում): Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում մնացել է նույնը, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցներինը՝ նվազել է 8 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 85% և 74% (*տե՛ս հավելված 2.2*):

Գծապատկեր 7



**Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.10 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 491 մլրդ դրամ:*


Հաշվետու տարում ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցները ավելացել են 24%-ով, ընդ որում ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ավանդները ցուցաբերել են աճի միտում (*տե՛ս գծապատկեր 7*):

Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 3 տոկոսային կետով՝ կազմելով 56% (*տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 8*): 30.06.10թ. դրությամբ, ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում են 9 մարզերում (30.06.09թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում էին դարձյալ 9 մարզերում):

---


[4] Ներգրավված միջոցները ներառում են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ (ներառյալ բանկային հաշիվները) և ժամկետային ավանդները:

Գծապատկեր 8



Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և կազմել 57%: Բացառությամբ Կոտայքի մարզի ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ժամկետային ավանդների ծավալները գերազանցում են ցպահանջ ավանդների ծավալները (*տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 9*):

Գծապատկեր 9




30.06.10թ. Երևանին բաժին է ընկնում ընդհանուր ցպահանջ ավանդների 82%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 78%-ը, ընդ որում. 30.06.09թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 85%-ը և 83%-ը, իսկ 30.09.00թ.՝ 82%-ը և 85%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (62%) կազմում են իրավաբանական անձանց միջոցները, ինչը արտահայտված է բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, իսկ ժամկետային միջոցների գերակշիռ մասը (70%) կազմում են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը արտահայտված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում, իսկ ԼՂՀ-ում և Սյունիքի մարզերում հակառակը (*տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կազմում ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռը մնացել է նույնը՝ 30.06.10թ. դրությամբ կազմելով ընդհանուր ներգրավված միջոցների 27%-ը. 30.09.00թ.

դրությամբ ՀՀ դրամով ավանդները կազմել են ներգրավված միջոցների 24%-ը: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Արարատի և Տավուշի մարզերի) արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը գերազանցում է դրամով ներգրաված ավանդների տեսակարար կշռին (*տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 10*):

Գծապատկեր 10




Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.10թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 40%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 54%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից (*տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11*):

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.10թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը զիջել է վարկային ներդրումների ծավալին (22%-ով): Վարկերի ծավալները գերազանցում են ավանդների ծավալները գրեթե ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Սյունիքի մարզի (*տե՛ս գծապատկեր 11*):


Գծապատկեր 11



** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.10թ. ներգրավված միջոցները կազմել են 491 մլրդ դրամ, վարկերն առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 463 մլրդ դրամ, ընդհանուր վարկերը՝ 542 մլրդ դրամ:*


Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[5] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները ավելացել են համապատասխանաբար 94 մլն դրամով և 142 մլն դրամով և 30.06.10թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 1.3 մլրդ դրամ և 1.7 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 12)*:

Գծապատկեր 12



Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ ցուցաբերել են աճի միտումներ. աճել են համապատասխանաբար 23%-ով և 25%-ով և 30.06.10թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 180.9 հազար դրամ և 233.3 հազար դրամ (*տե՛ս հավելված 3 և գծապատկեր 13*):

Գծապատկեր 13



[5] *Գլխամասային գրասենյակները դիտվել են որպես մասնաճյուղ:*

4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ տարածքներում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 717%-ով (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 1080% աճ) և կազմել 792.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Վարկային ներդրումների տարածքային կենտրոնացվածությունը բարձր է. Երևանին բաժին է ընկնում վարկերի 68.4%-ը (30.06.00-30.06.10թթ. ժամանակահատվածում Երևանում վարկերի կենտրոնացվածությունը նվազել է 1 տոկոսային կետով):

2. Ավանդները (բոլոր բանկերով) ավելացել են 501%-ով (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 789% աճ) և կազմել 614.2 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ավանդների տարածքային կենտրոնացվածությունը նույնպես բարձր է. Երևանին բաժին է ընկնում ավանդների 80%-ը, ընդ որում 2000 թվականից առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

3. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- վարկերի որակի բարելավում. 30.09.00թ. ժամկետանց վարկերը կազմում էին ընդհանուր վարկերի 14%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Շիրակի մարզը (30%) և Երևանը՝ (17%)), իսկ 30.06.10թ. դրությամբ՝ ընդհանուր վարկերի 1.1%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Գեղարքունիքի (2.2%), Լոռու (1.8%) և Տավուշի մարզերը՝ (1.6%)):
- 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշռի կտրուկ ավելացում. ավելացել է 31 տոկոսային կետով և կազմել 78%: 30.09.00թ. 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալը գերազանցել է մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալը 6 մարզերում (Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Լոռու և Արագածոտնի մարզերում), իսկ 30.06.10թ.՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:

30.06.09-30.06.10թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում (բացառությամբ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի) արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Ավանդների աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում: Վարկերի աճի տեմպը (25% աճ) գերազանցել է ավանդների աճի տեմպը (24% աճ):

2. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի աճի տեմպը (75%) գերազանցել է ընդհանուր վարկային ներդրումների աճի տեմպը (25%), ինչի արդյունքում ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում (բացառությամբ Տավուշի մարզի) տրամադրված ընդհանուր վարկերում ավելացել է միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը:
- 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերը աճել են 22%-ով, մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերը՝ 38%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 78%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի) 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է:
- ՀՀ դրամով տրամադրված վարկերը աճել են 17%-ով, արտարժույթով տրամադրված վարկերը աճել են 34%-ով, ինչի արդյունքում դրամով վարկերի տեսակարար կշիռը նվազել է 3 տոկոսային կետով և կազմել է 46%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է (բացառությամբ Երևանի, Կոտայքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի):
- ՀՀ դրամով ավանդները աճել են 21%-ով, արտարժույթով ավանդները աճել են 24%-ով, որի արդյունքում դրամով ավանդների տեսակարար կշիռը գրեթե չի փոխվել և կազմել է ընդհանուր ավանդների 27%-ը: ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է (բացառությամբ Արմավիրի, Շիրակի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի):
- Ժամկետային ավանդներն աճել են 14%-ով, իսկ ցպահանջ ավանդները՝ 40%-ով, որի արդյունքում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 57%-ը:

- Ֆիզիկական անձանց ավանդներն աճել են 31%-ով, իրավաբանական անձանցը՝ 15%-ով, որի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 3 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 56%-ը: Բացառությամբ Կոտայքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի, ՀՀ մյուս բոլոր մարզերում արձանագրվել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ:

30.06.10թ. դրությամբ

Ըստ տեղաբաշխված ոլորտների, մարզերում տեղաբաշխված վարկային ներդրումներում տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է առևտրի, արդյունաբերության, շինարարության, սպառողական և հիփոթեքային ճյուղի վարկերում (*տե՛ս հավելված 1.1*).

Արդյունաբերության ճյուղ. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում բավականին բարձր է արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 10-33%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց Ձորի և Կոտայքի մարզերը (33% և 29%):

Առևտրի ճյուղ. առևտրի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 10-24%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Սյունիքի և Արագածոտնի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 24%-ը, 22%-ը և 18%-ը հատկացված է առևտրի ճյուղին:

Սպառողական վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում սպառողական վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 14-39%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերը, որտեղ սպառողական վարկերի տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 39%, 38% և 36%:

Հիփոթեքային վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 4-12%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, ԼՂՀ-ն, Շիրակի և Արմավիրի մարզերը (տատանվում է 8-12% միջակայքում):

Շինարարության ճյուղ. համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ԼՂՀ-ն, Երևանը և Շիրակի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 17%-ը, 9%-ը և 7%-ը հատկացված են այս ճյուղին:

Գյուղատնտեսության ճյուղ. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-38%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերը (տատանվում է 30-38% միջակայքում), իսկ ամենափոքր տեսակարար կշիռն ունի Երևանը՝1%:

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. այս ոլորտի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-7%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց Ձորի և Կոտայքի մարզերը (7-ական տոկոս):

Տրանսպորտի և կապի ճյուղ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրած վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ: Ամենից մեծ տեսակարար կշիռ ունի Երևանը և Սյունիքի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 4%-ը և 3%-ը հատկացված է այս ճյուղին: